Սույն գիրքը թվայնացվել է Գրքասեր ՀԿ-ում՝ հայերենով գրականության պահպանման, հանրայնացման և ժամանակակից թվային միջավայրում հասանելի դարձնելու նպատակով:

Կազմակերպության նախաձեռնությունը միտված է հայերեն գրքերի և տեքստերի տարածմանը, ընթերցանության խթանմանը և մշակութային ոչ նյութական ժառանգության պահպանությանը՝ ապահովելով դրանց հասանելիությունը հնարավորինս լայն շրջանակների համար:

Մենք հավատում ենք, որ թվայնացումը ոչ միայն պահպանման միջոց է, այլև գիտելիքի, գրականության և մշակույթի շարունակական փոխանցման կարևոր ուղի:

Գրքասեր ՀԿ-ն գրքերը ձայնագրում և թվայնացնում է բացառապես Ձեր նվիրատվությունների շնորհիվ: Կազմակերպությանը կարող եք օժանդակել հետևյալ հղումով՝

https://grqaser.org/hy/donate

Ստուգված
Հայ գրականություն, Հրապարակախոսություն, Էսսե, Արձակ
13+

Վարդգես Պետրոսյան
«Թող ոչ մի զոհ չպահանջվի ինձնից բացի»

Նեղլիկ սենյակում նա իրեն պատեպատ էր խփում, իսկ բառեր չկային: Սենյակում կիսախավար էր. մոմերի հիվանդ լույսը մութը չէր ցրում, և չէր ցրում ծխախոտի ծուխը, որ անձրևաբեր ամպի պես կախված էր առաստաղի երկնքից: Մոմերը լուսավորում էին միայն մաշված գրասեղանը, գրոտած թղթերը, թանաքամանը և երիտասարդ դեմքը, որ մոմերի հիվանդ լույսից ավելի էր գունատ թվում: Բառեր չկային: Քսանմեկ տարեկան էր անձնագրով. նա խենթ էր՝ որքան թելադրում էր իր տարիքը, բայց և իմաստուն, որովհետև նաև երեք հազար տարեկան էր՝ իր ժողովրդի անձնագրով: Գիշերը վաղուց էր կիսվել, իսկ նա դեռ գալարվում էր ցավի ու հարցականների մեջ: Իսկ բառեր չկային: Բառեր, որ խտացնեին ժամանակը՝ մռայլ, անթափանց մի գիշեր, որ թվում է՝ չէր լուսանալու: Թվում էր «Հայ ժողովուրդ» կոչվող երեքհազարամյա դրամայի վերջին գործողության վերջին պատկերներն են. շուտով կիջնի արնագույն վարագույրը, իսկ դահլիճում բացի թուրք հրոսակներից ոչ ոք չի լինի, կիջնի վարագույրը, և նրանք կծափահարեն, օ՜, ինչպես կծափահարեն... Բառեր չկային: Իրենից առաջ արդեն հարցրել էին՝ «Քեզ սպասող չմնաց, ո՞ւր ես գալիս, այ գարուն...»: Իրենից առաջ արդեն մրմնջացել էին «Ողբի հայրենիք, որբի հայրենիք...»: Իրենից առաջ արդեն աղաղակել էին՝ «Մի՞թե վերջին պոետն եմ ես...»:

Բառեր չկային, ուրիշ բառեր չկային, և երիտասարդը գալարվում էր ցավի ու հարցականների մեջ: Բառեր չկային, կար միայն ահավոր մի Ոչ, որ նա ուզում էր շպրտել աշխարհի ու պատմության լավ սափրված երեսին. Ոչ, պիտի ապրի-շարունակվի իր ժողովուրդը: Ինչպե՞ս՝ նա չգիտեր: Նա սեփական աչքերով տեսել էր Արևմտահայաստանի կործանումը, նայել էր հազարավոր որբերի աչքերի մարած կրակներին, մոխրացած-հանգած օջախներին: Նա կռվել էր իբրև վրեժի զինվոր, դիակների բուրգեր էր տեսել, հուսալքվել էր, հետո հուսավառվել: Նա հասկացրել էր սիրել, մերժվել, ատել՝ բավական չէ՞, հետո ինչ, որ նա հազիվ քսան-քսանմեկ տարեկան է. մեկը, իրենից ավելի դժբախտ ու զգայուն, ապրեց տասնինը տարի, մյուսը մի «գունատ, հանճարեղ պատանի», քսանմեկ, ինքն ինչո՞ւ է կառչում կյանքին...

Ո՛չ, ո՛չ, ո՛չ:

Նա հանկարծ պարզ-պարզ տեսավ՝ ահավոր պատկեր էր, մահվան տեսիլք. պղտոր, կատաղած հեղեղը քշում էր իր ժողովրդի պատմության դագաղը: Դագա՞ղը... Եվ առաջին տողը ծնվեց իբրև նորածին մանկան ճիչ.

Թող ոչ մի զոհ չպահանջվի ինձնից բացի...

Այդ տողը հետո պիտի դառնար վերջիններից մեկը, բայց ծնվեց իբրև առաջին. դա բանաստեղծության տող չէր, այլ կենսագրության, հուսահատ ինքնազոհության ճիչ էր, դեպի դահլիճը քայլող մահապարտի արժանապատվության վերջին աղաղակ.

Թող ոչ մի զոհ չպահանջվի ինձնից բացի...

Վերջին աղաղա՞կ... Ոչ, նա կռվել էր նաև հեղափոխության խրամատներում, խելահեղ մարդկանց հետ, որոնց աչքերում վառվում էր գալիքը, որոնք այսօր մեռնում էին՝ իրենց բիբերի մեջ արդար ու լուսավոր վաղը: Նրան իր մեջ էր առել «խելագարված ամբոխների» հեղեղը. ի՞նչ են նրանք տրորելու և ի՞նչ են գուրգուրելու՝ իրենց կոշտ ու կոպիտ մատներով, իրենց հոգնած-կատաղած ոտքերի տակ...

Գարնանային երկինքը չէր երևում նրա նեղլիկ պատուհանից, և երկնքում աստղերը մեռած աչքեր պիտի թվային:

Թող ոչ մի զոհ չպահանջվի ինձնից բացի,
Ուրիշ ոտքեր կախաղանին թող մոտ չգան...

Երկրորդ տողը գրեց նյարդային ու կատաղի, փակեց աչքերը, որ լիակատար խավար լինի, և փակ աչքերով քրքջաց. թղթի վրա ի՜նչ հեշտ է՝ ուրիշ ոտքեր... Թող մոտ չգան... Մի կախաղա՞ն է, ի՞նչ է, իր ժողովրդի բոլոր պարանոցների համար ոսոխը խնամքով պատրաստել է «մի պիրկ պարան ու... Ու երկնուղեշ փայտեր երկու»:

Հետո ի՞նչ: Մեռնել միշտ էլ կարելի է: Օ, իր հազարամյա ժողովուրդը ինչ օրինակելի փորձ ունի մեռնելու... Այնպես ուզեց ապրել: Ապրել նոր բացվող ուրիշ այս գարունը, ամառը, հետո աշունը, ձմեռը և գարուններ և ամառներ: Ապրե՜լ... Աչքերի մեջ ժպիտ կայծկլտաց, հիշեց հայրենի քաղաքը, քաղաքային զբոսայգին, իր սիրած աղջիկներին տեսավ... Հետո պատկերները հանգան. աղջիկները վաղուց չկան աշխարհում, և այս պահին նրան ուրիշ զրուցակից էր հարկավոր: Ուրիշ, որ ավելի խելոք լիներ, ավելի տառապած, ուրեմն, ավելի իմաստուն...

Եվ նա եկավ: Ոչ թե դուռը, թակեց, ներս մտավ, այլ թափանցեց իբրև լույս, ճեղքելով պատուհանի ապակիները, խոնավ, հաստ պատերը, առաստաղից կախված ամպը ծակեց-անցավ ճառագայթի պես:

Մոմե՞րը շատացան...

«Ո՞վ ես դու, խոսիր»:

Պատասխան չեղավ:

Լույսը անմարմին մատներով շոյում էր նրա քրտնած, սև մազերը:

Գիշերը թանձր էր՝ որպես դառը մեղր, և կրկին արթնացան բառեր, որ իրենը չէին.

Մի՞թե վերջին պոետն եմ ես,
Վերջին երգիչն իմ երկրի...

Ո՜չ, ո՜չ, ո՜չ: Լռության մեջ իր ձայնը լսեց: Մի՞թե զառանցում է: Սթափվեց իր ձայնից և հանկարծ հասկացավ, միանգամից ու անդառնալիորեն հասկացավ, թե ով էր, որ եկավ: Չհասկացավ, չտեսավ, միայն զգաց, որովհետև քիչ առաջ ծնված տողի մեջ՝ թող ոչ մի զոհ...

Ինձնից բացի... Իր բառերը չէին. ուրիշն էր ասել այդ բառերը, ասել էր հազար տարի առաջ, և ինքը պարզապես կրկնեց՝ իբրև ուշացած արձագանք:

«Քո բառերն են, որդիս...»:

Որդի՞ս: Մորից հետո ուրիշ ոչ ոք նրան չէր ասել՝ որդիս...

«Ո՞վ ես դու, Լույս...»:

Նա էր:

Ուրիշ ո՞վ կարող էր լինել՝ բացի նրանից:

«Ես քեզ հազար տարի սպասել եմ, Հայր...»:

Երիտասարդը խոսել էր ուզում, հարցնել-պատասխան էր ուզում, իսկ Լույսը մունջ էր: Կատաղի տրորեց ճակատը, ճմռթեց— մի կողմ նետեց գրոտած թղթերը: Ամենակարևոր բառերը հենց նրանք են, որ մարդն ինքն իրեն պիտի ասի:

«Ես քեզ հազար տարի է չեմ տեսել, Հայր...»

Իսկ Լույսը չէր պատասխանում: Չէր պատասխանում, բայց կար: Եվ երիտասարդն զգաց, որ ոչ միայն սենյակը, այլ ինքն է արդեն լցվում լույսով, զրուցակիցն իր մեջ էր, իր ներսում, և նա հանդարտվեց.

«Ես ուզում եմ ոչ թե պատկերացնել քեզ, Հայր, վերհիշելով միջնադարյան ձեռագրի մեջ փրկված նկարդ, որ նման է մեր բոլոր սրբերին և բոլոր բանաստեղծներին, չեմ ուզում նաև նկարել քեզ իմ երևակայության ներկերով կամ վերծանել դիմագծերդ՝ տասը հազար տող երկարող քո ինքնաբզկտումից:

Ուզում եմ տեսնել քեզ: Տեսնել քեզ կագնած, նստած, ուզում եմ նստես այ այն աթոռին, ծխես իմ ծխախոտից, մոխիրը թափես հատակին: Ուզում եմ տեսնել քեզ բարկացած կամ հազալիս, տեսնել, թե ինչպես ես շոյում քո չունեցած երեխաների մազերը, տեսնել քեզ հարբած, քրքջալիս, քո մենության անլուսամուտ պատերի մեջ բանտարկված և խառնված հազարադեմ ամբոխին, որ չգիտեր և այդպես էլ չիմացավ, որ դու հանճար ես:

Ո՞վ էիր դու, որ աշխարհի բոլոր մեղքերի համար քեզ, միայն քեզ մեղավոր ու պատասխանատու համարեցիր, երբ սեփական մեր մեղքերի համար մենք աշխարհի հերն ենք անիծում...

Իրական, միս ու արյունից մա՞րդ էիր դու, թե առասպելի ապօրինի զավակ, որովհետև դու չափից ավելի անմարմին ես անգամ առասպելի համար»:

«... Եթե անգամ ողջ մայր անտառներն այն Լիբանանի
Զոդելով դարձնեմ կշեռքի լծակ
Եվ մի նժարին իբրև կշռաքար
Արարատ լեռը դնելու լինեմ,
Դարձյալ չի կարող նա իր ծանրությամբ
Իջնելով հասնել, համազուգակցել ու հավասարվել
Մյուս նժարի հանցանքներիս հետ»:

«Գուցե հանճարեղ բառատարա՞փ է այդ տասը հազար տողը, տառապանքդ դե՞ր է, որ խաղացիր քո ողջ կյանքում, գուցե հիասքանչ սո՞ւտ է այդ ամենը... Սո՞ւտ, իսկ ինչու քեզնից հետո ոչ ոք չժայթքեց այդպիսի սուտ...»:

«... Խրախճանքի մեջ՝ տխուր ու տրտում
Դեմքով միշտ ժպտուն, բայց մտքով խռոված,

Տեսքը ծիծաղկոտ, աչքը ողբի մեջ...
Երկու ըմպանակ ունի ձեռքերում,
Մեկն արյունով լի, մյուսը՝ կաթով...
Մի դեմք, երկակի արտահայտությամբ՝
Տխուր ու ցասկոտ...»:

Մոմերը վերջանում էին, և երիտասարդը հանգցրեց մեկը: Մյուսն էլ կարող էր հանգցնել. լույսը իր ներսումն էր: Պատերը ետ-ետ գնացին, և նրա գրասեղանն արդեն բաց դաշտում էր, իսկ շուրջը բզկտված երկիր Նաիրին...

«Օ, իմ ժողովուրդ, դու հավաքական Նարեկացի, գուցե արդա՞ր էր, որ դու, հենց դու և միայն դու պատասխան տայիր աշխարհի մեծ ու փոքր մեղքերի համար և հենց քո «ողբաձայն աղաղակը» չլսեր աշխարհը, թեպետ դու աղաղակել ես հենց նրա բառերով: Օ, իմ ժողովուրդ, դու հանճարեղ ձախողակ: Դու, որ սքանչելի բանաստեղծներ ունեցար, բայց ոչ մի դիվանագետ և պետական մարդ (եթե ունեցար՝ ուրիշներին ծառայեցին), դու, որ սրբացրիր բոլոր քո խենթերին և խաչեցիր քո այն զավակներին, բոլորին, որ ուզեցին, ճգնեցին քեզ ծառայել, քեզ օգնել՝ առասպելի Արտավազդ արքայորդուց մինչև... Ես չգիտեմ՝ այսօր, վաղը դու ո՞ւմ ես խաչելու... Ես կռիվ ունեմ ժողովրդիս հետ, իսկ դու ասում ես ինձ հազարամյա քո հեռվից.

Մի կեղեքիր ինձ, հոշոտված եմ, տես,
Արդեն ջարդվածիս Էլ մի ջախջախիր,
Էլ մի բզկտիր, մորմոքված եմ ես,
Մթնածիս նորից մի կուրացրու...

Սիրեցի՞ր դու որևէ մեկին, որևէ մեկը սիրե՞ց քեզ... Իսկ սիրե՞լ ենք մենք որևէ մեկին, որևէ մեկը սիրե՞լ է մեզ...»:

Երիտասարդի ներսում մտքերի, հարցականների մի մեղվափեթակ էր, և մեղուները միայն թույն էին հորինում: Պատուհանի ապակիները գունատվել էին. նրանի՞ց էր՝ Լույսից, թե՞ առավոտն էր մոտենում դանդաղաքայլ: Նա հանկարծ կողք կողքի տեսավ ժողովրդի բոլոր ժամանակները, երեքհազարամյա մի պատմություն եկավ-լցվեց-տեղավորվեց մի նեղլիկ սենյակի պատերի մեջ, շարվեց մի թելի վրա:

«Մե՞նք ժառանգեցինք քո ինքնաբզկտող անկեղծությունը, թե՞ դու էիր ծնվել իբրև քո ժողովրդի այդ անկեղծության ամենահիվանդ և ամենասիրելի զավակ... Չգիտեմ:

Մի ժողովուրդ կարո՞ղ է բաղկացած լինել միայն բանաստեղծներից արքա-բանաստեղծ, զորապետ-բանաստեղծ. դիվանագետ-բանաստեղծ, զինվոր-բանաստեղծ... Բանաստեղծ, բանաստեղծ, բանաստեղծ...

Օ, իմ ժողովուրդ, պատմություն կոչվող դպրոցի դու միամիտ աշակերտ:

Պարսին բռնակալը իր որջն էր կանչում մեր արքային և գնում էր մեր արքան, թեպետ համոզված էր, որ շղթայելու են իրեն և մինչև իր օրերի վերջը ինքը նայելու է սպարապետին, որի մարմինը լցնելու են հարդով ու դնելու են իր աչքերի առաջ:

Ասորեստանի հզոր տիրակալը՝ կին, սիրում էր մեր գեղադեմ թագավորին և, հանուն իր խելահեղ կրքի, պատրաստ էր հզորացնել մեր երկիրը, բայց մեր թագավորը գիմնազիստի անկեղծությամբ բանաստեղծեց. «Չեմ դավաճանի իմ Նվարդին»:

Հռոմի կայսրուհին՝ երիցս կին, երազում էր, որ մեր թագավորն էլ հիացումի և հաճոյախոսության փափուկ բառեր ասի իրեն, բայց մեր թագավորը, գիտե՞ք ինչ, չէր սիրում Հռոմի կայսրուհուն, ինչպե՞ս ասեր, որ սիրում է, երբ որ չէր սիրում...

Հայ բժշկին, որ նաև մարգարտաշար տողեր էր գրում, տանում էին մորթելու, իսկ նա այդ սպանդի ճանապարհին բուժում էր և, այո, բուժեց թուրք նահանգապետի մահամերձ աղջկան. հետո, իհարկե, «չմերժեցին» և նրան էլ մորթեցին իր ընկերների հետ:

Հայ զորապետը քարացած շարքի առաջ գնդակահարում է իր ամենասիրած անվեհեր զինվորին, որովհետև այդ զինվորը փորձել էր բռնանալ նրբիրան թրքուհու կամքի վրա, իսկ թրքուհու արյունակիցները նույն այդ օրերին հարեմներն էին լցնում, լլկում և բռնաբարում էին հազարավոր հայ աղջիկների:

Անգլիայի վարչապետը սրտաճմլին սեր էր բացատրվում հայ ժողովրդի հետ, մի գումարտակ անգամ խնայելով արյան մեջ խեղդվող երկրի համար, իսկ նրան լսող հայ դիվանագետ-բանաստեղծը, տեսակցությունից վերադառնալով հյուրանոց, գրում էր օրագրում. «Օ, ինչ լուսավոր հոգի է Անգլիո վարչապետը և ինչպես է նա սիրում մեր ժողովրդին...»:

Արտաքին գործոց մեր նախարարը մեծ երկիր՝ Ռուսաստան էր գնում, և նրա այցը բախտորոշ կարող էր դառնալ արևաքամ իր հայրենիքի համար, և թանկ էր ամեն մի վայրկյանը, բայց նա էլ բանաստեղծ էր և մեկ շաբաթով թեքեց իր ճամփան, որ հարգանքի վերջին տուրքը մատուցանի ութսուներեք տարեկանում վախճանված հորաքրոջ աճյունին... Իսկ աշխարհի զոհասեղանին մահամերձ իր երկրի մարմինն էր»:

Տխուր, անըմբռնելի պատկերները եկան-շարվեցին մի թելի վրա, և թելն արևագույն էր, և թելը իր ժողովրդի պատմության ճշգրիտ հետագիծն էր ուրվագծում:

Իսկ Լույսը լուռ էր: Լույսը. միայն իրեն էր մեղադրում՝ անցյալ և գալիք մարդկային բոլոր մեղքերի համար:

«Եղե՞լ ես դու, արդյոք, թե հորինել ենք քեզ, մանավանդ, արդեն ոչ մի հետք չի մնացել քո գոյությունից. այն վանքը, որտեղ աղոթել ես ու տառապել, որտեղ ժայթքել ես տասը հազարտողանոց այդ հրաբուխը, հողին է հավասարեցված, գերեզմանդ չկա և ծնվածդ տունը չկա: Չկա, չկա, չկա:

Ուժե՞ղ էիր դու, թե՞ թույլ...

Իսկ ի՞նչ է նշանակում ուժեղ և ի՞նչ է նշանակում՝ թույլ...

Գուցե մարդկային պարզ թուլությունից էիր խոստովանում քո արած ու մանավանդ չարած մեղքերը, գուցե տառապանք և ինքնաբզկտում էիր խաղում, գուցե նմանվել էիր ուզում մարգարեներին ու նահատակներին, որովհետև դեռ էն գլխից քո ժողովրդի ուշքը գնում էր հալածվածների ու խենթերի համար, որովհետև դեռ էն գլխից քո ժողովուրդը չի հանդուրժել, էլ ուր մնաց թե սիրել՝ իր հաջողակ որդիներին...

Օ, իմ ժողովուրդ, դու հավաքական Նարեկացի: Օ, Նարեկացի, իմ ժողովրդի անձնագրի ճշգրիտ լուսանկար...

Ճշգրի՞տ...»:

Բառը սխալ թվաց, զնգզնգաց ականջներում՝ կեղծ ոսկեդրամի զնգոցով:

«Որքան ենք մեր ձախողումների պատճառը դրսում որոնել, երբ պատճառը հաճախ միայն մենք ենք եղել, միայն մենք, մեր բաժան-բաժանությունը, անխելք-հերոսությունը, խելոք-եսամոլությունը...

Եվ հաճախ ինչպես ենք ատել ինքներս մեզ: Հավաքական ժողովուրդը սիրել ենք, փոխադարձաբար ատել իրար: Ամեն հայ մի ուրիշ հայ պիտի ունենա, որին թշնամի պիտի լինի մինչև իր կյանքի վերջը: Ո՞ւմ բառերն են... Ամեն մեկս էլ կարող ենք ասած լինել, որովհետև այդ բառերը մեր կենսագրության լավ տպված պատճենն է»:

Երիտասարդը հասկացավ, որ հանձնվում է անզուսպ չարության պղտոր հորձանքին: Լո՞ւյսը հուշեց... Եվ կատաղությունը հանկարծ տեղի տվեց տխուր, հուսահատ, անօգնական սիրո, բայց սերն էլ լցված էր արճճե հարցականներով:

«Օ, իմ ժողովուրդ, քանի դար է, ինչ թափառում ես դու աշխարհում: Փախչում ես քո երկրից, ուրիշ ես ուզում դառնալ, ազատվել քո անունից որպես անեծքից և չես կարողանում: Չես կարողանում: Եվ վերադառնում ես երկիր, որ հետո նորից փախչես: Մինչև ե՞րբ, մինչև ե՞րբ, մինչև ե՞րբ...

Ամեն օտար երկրում դու դպրոցներ և վանքեր կառուցեցիր, հենց հիմա՝ այս պահին էլ երևի կառուցում ես, քանի-քանի օտար քաղաքների առաջին քարը դնողների մեջ եղար... Քանի-քանի տպարաններ հիմնեցիր և թերթեր, թերթեր, անհամար թերթեր, բայց ավելի հաճախ՝ սիրեցիր կարդալ ուրիշների թերթերը... Դպրոցներ հիմնեցիր, բայց ավելի հաճախ՝ սիրեցիր զավակներիդ ուղարկել ուրիշների դպրոցները:

Օ, անպատասխան հարցականների իմ ժողովուրդ, բացատրիր ինձ քո գոյության անըմբռնելի խորհուրդը, որովհետև այդ ամենով հանդերձ դու կաս, եթե... Եթե վաղն էլ կարողանաս մնալ և շարունակվել»:

Նա իրեն հանկարծ զգաց մահամերձ զավակի սնարի մոտ նստած, և տողը կրկնվեց.

Թող ոչ մի զոհ չպահանջվի ինձնից բացի:

Քսանմեկ տարեկան պատանին իրեն հանկարծ հայր զգաց, ժողովրդի հայր, որ պիտի զոհաբերի իրեն: Բայց կփրկվե՞ն զավակները...

Պատուհանի ապակիները բաց կապույտ էին, աշխարհը, որ միլիարդերորդ անգամ նորից էր արթնանում, և ականջների մեջ տրոփեցին խելագարված ամբոխների ոտնաձայները:

«Օ, եթե ապրել սովորեինք, ինչպես սովորել ենք մեռնել: Հայր, լսիր ինձ, ես ուզում եմ խոսել քո բառերով, թեպետ դու ընդամենը միֆ ես, աղոթք, հանճարեղ ու անմարմին սուտ: Իսկ ես սիրում եմ, ատում. հուսալքվում և հավատում՝ իսկականից: Ես չեմ աղոթում, չեմ աղոթի, ես պարտվում եմ, հաղթում, կռվում՝ որտեղ պետք է, նաև որտեղ պետք չէ՝ իսկականից: Հաղթո՞ւմ...

Օ, իմ հազարամյա հայր, լսիր քո ուշացած որդուն:

Քո անունով մենք երդվում ենք արդեն հազար տարի, թեպետ մատյանդ հազիվ մի քանի մարդ է կարդացել, քո մատյանը արդեն հազար տարի մենք դնում ենք հիվանդների բարձի տակ, և նրանք, օ՛, հրաշք, ապաքինվում են, թեպետ վաղուց, շատ վաղուց մենք բժիշկներ և բժշկապետներ ունեինք... Ինչպես ենք մենք սիրում անքննելին, ինչպես ենք կեղեքվում կորցրածի համար, չգնահատելով մեր ունեցածը և դրա համար կորցնում ենք, կորցնում ենք, կորցնում ենք անընդհատ: Եվ քիչ բան է արդեն մնացել կորցնելու՝ մեր հողի և պատմության վերջին, ամենավերջին պատառը...»:

Փչեց-հանգցրեց նաև երկրորդ մոմը:

Թղթեր չկային և գրասեղան չկար, և թանաքամանը լցված էր լերդացած արյունով: Եվ գրչի ծայրին թանաքը քարացել էր:

Լուսամուտի պղտոր ապակիների մեջ ուրվագծվեց Լեռը և ամեն ինչին անտեղյակ Լեռը վեհասքանչ էր ինչպես միշտ: Լեռն էլ օտար թվաց:

«Դու էլ ես նայել Արարատին, և լեռն ավելի թեթև է կշռել, քան քո գործած (և չգործած) մեղքերը, իսկ լեռան չափ իրական մեղքերով մենք որքան ենք կուրծք ծեծել, կասկածելով աշխարհին և հիացած մեզնով...

Ինչո՞ւ ենք այսքան կռվազան, երկու հազար տարի շարունակ խոսում ենք, խոսում միաժամանակ, իսկ պետք է միասին խոսել, մի-ա-սին: Մի-ա-ժա-մա-նակ՝ այսինքն ոչ մեկս մյուսին չի լսել, չի լսում, թեպետ գուցե ասում ենք նույն բառերը և նույն երազն ունենք: Ամեն մեկս իր, միայն իր բառերն է լսում:

Հավերժական մեր ոսոխը Արարատյան դաշտ է խուժել, մի-ա-սին կխոսե՞նք գոնե հիմա, կլինի՞, արդյոք, Նոր Ավարայր...»:

Գիշերվա թանաքն էլ վերջացել էր, և լույսը թափանցիկ-գունատ մատներով դեռ շոյում էր երիտասարդի ճակատը, մազերը, աչքերը:

«Գուցե բարությո՞ւն է մեր ուժը, որդիս,— ասում էր Լույսը,— գուցե բարությա՞մբ ենք մենք ապրել ու դիմադրել: Եվ բարությունն անպաշտպան է, որդիս, բայց գուցե դու ուրի՞շ ճանապարհ գիտես...»:

Հայոց բզկտված հողի վրա արյունաքամ բարձրանում էր արևը և բանաստեղծի հոգում, ուղեղում և թանաքամանի մեջ մահը, կյանքը և հույսը խառնվում էին իրար.

Թող ոչ մի զոհ չպահանջվի ինձնից բացի,
Ուրիշ ոտքեր կախաղանին թող մոտ չգան,
Եվ թող տեսնեն իմ աչքերի մեջ կախվածի,
Իմ բորբ երկիր, լուսապսակ քո ապագան:
. . . . . .
Թող ոչ մի զոհ չպահանջվի ինձնից բացի...

Ինչ-որ տեղ, մոտիկ-հեռվում՝ արթնացել-լա՞ց էր լինում, թե՞ ծիծաղում էր մի երեխա, և բանաստեղծը, որ հետո պիտի մտներ հայոց պատմության մեջ Չարենց անունով, մի կողմ հրեց թղթերը, դուրս եկավ փողոց:

Երեխան Հալաստանն էր, և նաև իր կարիքն ուներ: Իր կարիքը՝ իբրև զինվորի:

Եվ նա դուրս եկավ կռվելու և ապրելու այդ Երեխայի կյանքի համար: